«ԻՄ ԵՐԱԿՆԵՐՈՒՄ ԶԳՈՒՄ ԵՄ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՐՏԻ ՏՐՈՓԸ»

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի ընդունելությունների սրահում, տեղի ունեցավ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մամլո ասուլիսը՝ նվիրված Նորին Սրբության՝ Ֆրանսիա, Սինգապուր, Բանգկոկ և Ավստրալիա կատարած հովվապետական այցելություններին:

Ներկա ուղևորությունը, ինչպես և բոլոր նախորդները, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց որպես կենսական անհրաժեշտություն՝ հոգևոր հովիվ-ժողովուրդ կապը առավել գործուն և ամուր դարձնելու առումով: Կենդանի շփումները հնարավորություն են ընձեռում ավելի խորը ճանաչել մեր հայրենակիցներին՝ լինեն նրանք Ֆրանսիայում, Ավստրալիայում, Սինգապուրում, թե որևէ այլ տեղ, և «Ես, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպես մեր ժողովրդի հոգևոր հովիվ, իմ երակներում զգում եմ նրա սրտի տրոփը, իսկ մյուս կողմից՝ ժողովուրդն էլ իմանում է իր հոգևոր հովվի մտածումների, զգացումների մասին», նշեց Նորին Սրբությունը: Վեհափառը չկարողացավ թաքցնել իր անկեղծ հիացումը՝ հարազատ եկեղեցու հետ մեր ժողովրդի ունեցած կապվածության, նրա շուրջ համախմբվածության առիթով, և ավելացրեց, որ հոգևոր վերազարթոնքի, ազգային ինքնագիտակցության մի հզոր շունչ է թևածում Սփյուռքի բոլոր գաղթօջախներում՝ դրա իրական պատճառներից ամենագլխավորը համարելով մեր ազատ, անկախ հանրապետության կայացման իրողությունը: Սփյուռքի հայությունն ապրում է նորօրյա Հայաստանի կյանքով, ուրախանում նրա նվաճումներով և աշխատում իր համեստ բաժինը բերել հայրենիքի ամրացման գործընթացին: Վեհափառ Հայրապետը Սփյուռքում որպես հայրենաշինական ձեռնարկների վառ օրինակ նշեց Ֆրանսիայում երեք նորաբաց հայկական դպրոցների փաստը: Սփյուռքահայությանը շատ է հուզում նաև Արցախի և արցախահայության ճակատագիրը:

Իր ողջ ուղևորությունը Նորին Սրբությունը բաժանեց երեք հիմնական բաժինների՝ հանդիպումներ հայ համայնքներում, հանդիպումներ եկեղեցական շրջանակներում և հանդիպումներ պետական բարձրագույն ատյաններում՝ վերջիններիս մեջ կարևորելով Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակի, Սենատի նախագահ Ռընե Մոնորիի, արտաքին գործոց նախարար Էրվե Դը Շարեթի, Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդի և Տասմանիայի թագավորական փոխանորդի հետ հանդիպումները: Իսկ ժակ Շիրակի կողմից Ազգային Լեգեոնի շքանշանի բարձրագույն աստիճանով պարգևատրվելու փաստը Վեհափառ Հայրապետը վերագրեց Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ Ֆրանսիայի նախագահի, ֆրանսիացի ժողովրդի տածած մեծագույն հարգանքին:

Ուղևորությունը Սինգապուր, Բանգկոկ և Ավստրալիա նշանավորվում էր ամենից առաջ նրանով, որ այն առաջին կաթողիկոսական այցելությունն էր: Մինչ այդ հայոց կաթողիկոսներից և ոչ մեկը այցելություն չէր տվել հիշյալ վայրերը:

Նշանավոր և ուրախալի էր նաև այն, որ Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին, որը հիմնադրվել է 1835 թվականին՝ լինելով առաջին քրիստոնյա եկեղեցին ողջ Ծայրագույն Արևելքում այսօր համարվում է պատմական հուշարձան:

Պատասխանելով լրագրողների հարցերին, Գարեգին Ա Կաթողիկոսը տեղեկություններ տվեց նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքների, մասնավորապես այդ շրջանակներում կազմակերպվելիք ուխտագնացությունների, ցուցահանդեսների, գիտաժողովների մասին՝ նշելով, որ համարյա բոլոր քրիստոնյա Եկեղեցիները, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ն, իրենց մասնակցություն են բերելու այդ գործին: Խոսք եղավ նաև Երևանում Մայր եկեղեցու կառուցման մասին: Նորին Սրբությունը նշեց, որ եկեղեցին իր դռները հավատացյալների առջև կբացի 2001 թվականի հունիս ամսին, Ս. Էջմիածնի հիմնադրման տոնի օրը, և կկառուցվի այն տեսքով, ինչպես հաստատվել է Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսի օրոք: Մայր Աթոռում կատարված և կատարվելիք աշխատանքների առնչությամբ Վեհափառ Հայրապետը նախ ուրախությամբ նշեց, որ անցած երկու տարիների ընթացքում Մայր Աթոռում լույս են տեսել իննսունինն անուն գրքեր, դրանց թվում նաև կրոնի դասագրքեր, ապա խոսեց ապրիլի սկզբին կայանալիք եկեղեցական ժողովի մասին, որի ընթացքում պետք է մշակվի և վերջնական տեսքի բերվի մեր Եկեղեցու Կանոնադրությունը:

Ասուլիսի ավարտին Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ հաջորդ հովվապետական այցելությունը կլինի Մեծ Բրիտանիա, այս տարվա նոյեմբեր ամսին: